

Լին Ուլման

ԵՐԲ ՔԵԶ ՀԵՏ ԵՄ

ՎԵՊ



ԳԻՏԱՆՑ
Երևան 2010

This translation has been published with the financial support of NORLA
Հայերեն թարգմանության հրատարակությանը սպառադիլ է «Նորվեգիայի գրականությունը
արտասահմանում» կազմակերպությունը

Linn Ullmann, NÅR JEG ER HOS DEG

Ուլման, Լին

ԵՐԲ ՔԵԶ ՀԵՏ ԵՄ – Վեպ, Եր.: Գիտանք, 2010, 184 էջ.

Նորվեգուհի լավագույն գրողներից մեկի այս վեպը ութերորդ գիրքն է «XXI դարի արձակ» մատենաշարի, որը ներառում է տարբեր ազգերի ներկայումս ստեղծագործող հայտնի գրողների լավագույն երկերի հայերեն թարգմանությունները:

Անառվա մի երեկո Մարտինը ներքաշում է Ստելային վտանգավոր խաղի մեջ, որը նշանավորելու էր իրենց միության տասը տարին. նրանք պետք է միասին քայլեն իննիարկանի շենքի տանիքի եզրով: Սարսափահար ականատեսների ճիշերի ներքո Ստելան սայթաքում է ու ցած ընկնում՝ մինչ այդ մի պահ հայտնվելով Մարտինի գրկում: Արդյո՞ք նա փորձել է բռնել Ստելային, թե՞ հրել է նրան: Այսպես է սկսվում այս բարդ հոգեբանական վեպը, որը պատմում է քսանմեկերորդ դարում ապրող մի նորվեգուհու կյանքի մասին:

ISBN 978-9939-810-08-9

NÅR JEG ER HOS DEG

© 2001, Tiden Norsk Forlag Norway

All rights reserved

© Գիտանք, հայերեն թարգմանության համար, 2010

Տեսագրություն

Ստելան և Մարտինը

Տուն Դամեֆալեմի մոտ

27. 08. 2000, ժ. 3: 25

Մարտին Սկսեմ սկզբից. այս մեջ փոքր քաղաքում ամառ է, գրեթե աշուն, աստղալից գիշեր է: Ժամը՝ գիշերվա երեքի ու չորսի միջև: Զեղնահարկից լսկում է ջրմուղագործի խօնմիոցը: Խոհանոցում նվազում է ձայնասփյուռք՝ շատ մեղմ, որպեսզի ոչ ոքի չարբնացնի: Լուս՝ ևս: Դա Stella by Starlight երգն է: Զգացնել է տալիս շոգ օրից հետո մնացած և շոգ օրից առաջ ակնկալվող տապը: Տանը բոլորը քնած են: Լուրյուն է: Երեխաները քնած են: Երազներ են տեսնում: Արթուն ենք միայն ես և դու:

Ստելա Մարտին:

Մարտին Ի՞նչ:

Ստելա Քեզ ասելու բան ունեմ:

Մարտին Լսե՞ք Ստելային: Նա ասելու բան ունի:

Ստելա Արի մի փոքր ընդմիջում անենք:

Մարտին Ուզում ես՝ ընդմիջում անենք:

Ստելա Յա:

Մարտին Ուրեմն սովորականի պես չե՞նք խաղալու:

Ստելա Չե՞:

Մարտին Ուզում ես՝ հարյուր տոկոսով լո՞ւրջ լինենք:

Ստելա Յա:

Մարտին Սա Ստելան է: Իմ կինը: Ինչպես տեսնում եք, նրա հագին թափանցիկ կարմիր գիշերանոց է: Ցանկանում եք, որ ավելի մոտենա՞ն: Ցանկանում եք տեսնել նրա դե՞նքը: Սա Ստելայի դեմքն է: Երկի ոչ կատարյալ գեղեցիկ, բայց...

Ստելա Ոչ գեղեցի՞կ:

Մարտին Այո, բայց իսկապես գեղեցիկից ել գեղեցիկ: Դա նկատի ունեմ: Ոչ բնատիպարի պես գեղեցիկ, ոչ արտաքնապես գեղեցիկ, բայց գեղեցիկից ել գեղեցիկ: Ստելա,

- ի՞նչ էիր ուզում ինձ ասել:
- Ստելա Ես կգերադասեի բնատիպարի պես գեղեցիկ լինել: Գեղեցիկից գեղեցիկը ոչինչ չի նշանակում:
- Մարտին Նշանակում է: Դա նշանակում է, որ սիրում եմ քեզ: Մի փշացրու նկարը... Դեմքի ավելի լավ արտահայտություն չունե՞ս: Ի՞նչ ասացի: Գեղեցիկից էլ գեղեցիկ, չ՞։ Լավ, իհմա ցած եմ իշնում: Սա նրա պարանոցն է, պարուիլու երկար ճերմակ պարանոցը՝ ցայտուն ընդգծված անրակով. առաջինը հենց անրակն էր, որ ինձ գրավեց: Եվ իհարկե նրա ստինբերը: Այժմ դրանք չեն երևում, որովհետև նա նստած է ձեռքերը կրծքին խաչաձևած, գլուխը մի կողմ թեքած. դժբախտ տեսք ունի: Բանի տեղ մի՛ դրեք, նա ուղղակի խաղում է տեսախցիկի առաջ: Սիրում է, որ ամեն ինչ իր շուրջը պտտվի: Յատկապես սիրում եմ նրա փորը: Նա ջանում է այն ներս քաշած պահել, բայց դա իրեն միշտ չի հաջողվում. փորը դուրս է ցցվում, ինչը ինձ դուր է գալիս: Ստելան գեր չէ. համենայն դեպս այնքան բարձրահասակ է, որ ընկերուիհներն ասում են, թե նա նիկար է, բայց նա իսկապես փոր ունի, որը դուրս է ցցվում: Եվ երբեք չի կոճկում ջինսե տարատի վերևի կոճակը, ինչը հիանալի է, որովհետև մի կոճակ պակաս եմ քանդում, երբ նրան մերկացնում եմ: Իսկ իհմա տեսախցիկը ցած է իշնում, և եթե նա անգամ մի փոքր ավելի հեռացնի իրարից ոտքերը, ապա դուք կտեսնեք կիսահաս լոլիկի պես բաց կարմրավուն ամոթույքը, իսկ եթե էլ ավելի լայն բաց անի ոտքերը, ապա կարող եմ ձեզ տանել դեպի վեր՝ նրա ներսը, քանի որ գիշերանոցի տակ նա մերկ է, և աշխարհում դրանից ավելի հիասքանչ տեղ չկա: Ավա՞ղ, նա հրաժարվում է մի քիչ ավելի լայն բացել ոտքերը, այնպես որ փոխարենը մենք ավելի ցած կիշնենք, որպեսզի կարողանաք տեսնել ամենագեղեցիկ ոտքերը ամբողջ Սկանդինավիայում: Ահա դրանք: Իննուկես չափսի: Կարմիր մաշիկներով: Մուգ կարմիր եղունգներով: Տասը ոտնամատ, որոնք հաճույքով կլուրի և ամեն երեկո կուտեի որպես աղանդեր. շա-

- քարից էլ քաղցր կլիմեր:
- Ստելա Մարտին:
- Մարտին Ի՞նչ:
- Ստելա Ինչո՞ւ պետք է դա հիմա անենք:
- Մարտին Իսկ ինչո՞ւ չէ:
- Ստելա Որովհետև ուզում եմ քեզ հետ խոսել:
- Մարտին Կարծում էի, պատրաստվում էիր քնել:
- Ստելա Չե, չի պատրաստվում, այդ չի...
- Մարտին Դե, ուրեմն պետք է շարունակենք: Տեսախցիկը ձեռքիս է, դու էլ ես այստեղ, ես էլ:
- Ստելա Լավ, բայց պետք է դա ճիշտ անենք:
- Մարտին Նրա համար միևնույն չէ՝, թե ինչպես ենք անելու:
- Ստելա Նրա անունն ի՞նչ էր:
- Մարտին Ո՞ւմ:
- Ստելա Ապահովգրության վաճառամիջնորդի: Անունն ի՞նչ էր:
- Մարտին Չգիտեմ: Չեմ կարողանում մտաբերել:
- Ստելա Ինչ էր, է՞... Մարտին, հեռու տար այդ խցիկը: Դադարի՛ր ինձ մկարելը: Նրան չի հետաքրքրում իմ անրակը, ոչ էլ ամոթույքս կամ ոտքիս մատները:
- Մարտին Նա ասաց՝ «բոլոր արժեքավոր բաները», չէ՝: «Բոլոր արժեքավոր բաները»: Լավ, սա մեր տունն է: Սա մեր կյանքն է...
- Ստելա Խոսքը կտուրը մի՛ գցիր:
- Մարտին Ստելա, մի՛ ընդհատիր: Լավ, այս մեծ փոքր քաղաքում հիմա ամառ է, գրեթե աշուն, աստղալից գիշեր է: Երկու հազար թվի օգոստոսի քսանյոթն է: Սա մեր տունն է, իսկ սա՝ մեր հյուրասենյակը: Սա մեր բազմոցն է (Ստելա, վե՛ր կաց, պետք է մկարահանեմ բազմոցը), ահա, սա մեր բազմոցն է: Գորշականաչ է, փափուկ և իտալական: Տասը տարեկան է, բայց լավ վիճակում է: Կարծում եմ այժմ դրա դիմաց հնարավոր է ստանալ տասնհինգ հազար կրոն:
- Ստելա Բա չէ:
- Մարտին Ի՞նչ ես ուզում դրանով ասել:
- Ստելա Տասնհինգ հազար կրոն տասը տարեկան բազմոցի

- համա՞ր, ո՞վ կիավատա դրան: Ի՞նչ էր այդ ապահովագրության մարդու անունը. նա դրան երբեք չի հավատա, Մարտին: Երևի անրջում ես:
- Մարտին Դա, իենց դա եմ անում: Ամրջո՞ւմ եմ: Այդ պատճառով է, որ գիշերը քնած չենք մնացած մարդկանց պես:
- Ստելա Մնացած մարդկանց մասին ի՞նչ գիտես:
- Մարտին Սա մեր բազմոցն է, մեր գորշականաչ իտալական բազմոցը՝ հաճելի, սքանչելի, հոյակապ բազմոցը: Մի ժամանակ՝ շատ վաղուց, դա մի ամբողջ կարողություն արժեր: Եթե մեր տունը վառվի, ապա ամենից շատ կզգանք դրա կորուստը: Դասկանո՞ւմ ես: Ամեն ինչ սկսվեց այդ բազմոցից:
- Ստելա Ամենից շատ կզգանք երեխաների կորուստը:
- Ի՞նչ:
- Մարտին Եթե տունը վառվի, ամենից շատ կզգանք երեխաների կորուստը:
- Մարտին Դա՛, իհարկե: Դու մայր ես, և, կարծում եմ, պետք է որ... բայց, Ստելա, ես խոսում եմ իրերի մասին: Բացի այդ, ենթադրում եմ, որ երեխաները կփրկվեն, այլ ոչ թե կվառվեն և ածուխ կդառնան:
- Ստելա Ուրախ եմ, որ դա ասացիր:
- Ի՞նչը:
- Ստելա Որ մեզնից ոչ ոք չի վառվի, ածուխ չի դառնա: Որ ամեն ինչ լավ կլինի:
- Մարտին Ամեն ինչ լավ կլինի:
- Ստելա Լավ:
- Մարտին Ստելա, իսկ ի՞նչ էիր ուզում ինձ ասել:

ԱՆԿՈՒՄ (1)

Այնա Բլում

Վկա

Ես երկու մեծ ականջ ունեմ:

Իտալական շքամուտքի ձև ունեցող երկու մեծ ականջ, որոնք այլևս չեմ օգտագործում: Նախ խլացավ մեկ ականջս, հետո էլ մյուսը: Ողբերգություն է պատահել:

Գործվելիքս դրեցի զամբյուղի մեջ և գլուխս հետ գցեցի՝ վեր նայելով: Նրանք կանգնած էին վերևում՝ տաճիքին, երկու տիկինիկի պես, սևահեր տղամարդը և դեղին-կարմիր զգեստով կինը: Գնում-գալիս էին եզրի երկայնությամբ: Դեռ ու առաջ երերալով: Ես գոռացի, որ ցած իշխեն: Մեռնելու բազմաթիվ եղանակներ կամ՝ առանց այլ մարդկանց գլխին ընկնելու: Դետիկուն պետք է ապահովագրված լինի այդպիսի պատահարներից: Այնուհետև նրանք կամ առան ու ցած նայեցին: Աստված իմ, պատկերացնում եմ, թե նրանց գլուխները ինչպես պատվեցին: Իսկ հետո նրանք գրկախառնվեցին: Թեև հաստատ չեմ կարող ասել: Արյո՞ք դա գրկախառնություն էր: Ինձ որ հարցնեք, դա ավելի շուտ նման էր վիճաբանության: Կինը նրան հետ էր հրում, իսկ տղամարդը կառչում էր նրան: Կամ էլ գուցե տղամարդն էր կնոջը հետ հրում, իսկ կինը կառչում էր նրան: Եվ այդժամ դա պատահեց: Կինը կորցրեց հավասարակշռությունն ու ընկավ: Կամ էլ տղամարդը հրեց, և նա ընկավ: Դժվար է ասել, թե ինչ տեղի ունեցավ: Բայց կինն ընկավ, դա հաստատ է: Սիրտս վեր թռավ: Մի անգամ ինձ թվաց, թե երկնքից վայր ընկնող օդանավ են տեսնում: Այն ժամանակ նույնպես սիրտս վեր թռավ: Աչքերս ամուր փակեցի ու սպասեցի, թե երբ է լսվելու գետնին զարկվելու ձայնը: Մի պահ մոռացել էի, որ խուլ եմ:

Կորին

Անցյալ գիշեր տղամվայում մի մարդ տեսա, որն ինձ ծանոթ թվաց: Նա անշարժ նստած էր իմ դիմաց՝ մի քանի շարք առաջ, և լուսամուտից դուրս էր նայում: Տեսնելու շատ բան չկար. փողոցները դատարկ էին, մութ էր ու տիհած, շվիցով անցնում էին հատուկենտ ինքնաշարժները: Փողոցն անայի

Էր. միայն ձյան փաթիլներ էին, որոնց հետապնդում էին անձրևի կաթիլները, և փողոցի լամպերի թաց սպիտակ լուսը:

Նրան տեսա նախ հետևնից: Յագին շագանակագույն կաշվե բաճկոն էր, մազերը խիտ էին ու սև: Գեղեցիկ տղամարդ է, մտածեցի, տղամարդ, որը քայլում է խրոխտ և երբեք չի սայթաքում: Մի պահ ինձ թվաց, թե նրա կողքի նստարանին կարմիր գգեստով մի աղջնակ տեսա, թայց հետո գլուխս թափ տվեցի: Այդ ի՞նչ եկավ միտքս: Այնտեղ ոչ մի երեխա չկար: Այս եղանակին և գիշերվա այս ժամին դա հնարավոր չէր: Տրամվայում մենք երկուսով էինք, իհարկե, թացի վարորդից: Տղամարդը վեր կացավ և ուղղվեց դեպի առջևի դուռը: Մոտենում էինք կանգառի:

- Մարտին Վոլոդ, - ցածրածայն կանչեցի ես, - այդ դո՞ւք եք:

Տղամարդը շրջվեց: Նրա նեմքն անծանոթ էր: Աչքիս ընկան նրա կանաչ աչքերը, այտի սպին և խորաթափանց հայացքը:

- Յավանաբար սխալվել եք, - ասաց նա, երբ դուռը բացվեց: - Դա ես չեմ:

- Այո, - ասացի, - դուք չեք: Բայց ամեն դեպքում թարի գիշեր, և զգույշ քայլեք: Մայթը սայթաքուն է:

- Շնորհակալություն, ձեզ նույնական թարի գիշեր:

Վերջին անգամ նրա հետ գործ էի ունեցել մոտ վեց ամիս առաջ: Դա անցյալ տարվա սեպտեմբերին էր: Ստելայի թաղման նախորդ երեկո ես նրան զանգահարեցի տուն, որը գտնվում էր Յամբորգվայնում, Դամեֆալեն փողոցի վերին մասում: Մենք նստեցինք մեծ մուգ շագանակագույն ճաշասեղանի մոտ և այդտեղ անցկացրինք ամբողջ գիշերը: Նա խնդրեց՝ ցածրածայն խոսեմ, որպեսզի չարթնացնեմ երեխաներին: Յիմնականում նա էր խոսում: Ես հարցեր էի տալիս: Ես դա լավ եմ անում, և երբ նստած էինք այնտեղ, մտածեցի, որ մենք՝ նա և ես, կարծես միասին ենք պատմություն ստեղծում: Եվ ստեղծելու ընթացքում այն, ինչ եղել էր իրականում, սպրդում է մատներիս արանքով: Թեև իմ աշխատանքում ես ընտելացել եմ դրան (այն թանին, որ պատմությունները մատներիս արանքով սպրդում են), թայց անբավարարության զգացումը դրանից չի պակասում: Ես դիտում եմ, լսում, կռահում և քացահայտում: Բայց իրադարձությունների վրա ազդելու իշխանություն չունեմ: Չեմ կարող կանխարգելել ողբերգությունները: